

էր, ինչպէս կը տեսնենք Զ դարէն իսկ՝ Աշտարակեցւոյն կանոնաց մէջ: Ըստ աւսոնց՝ սովոր էին մորթելէ յառաջ «զպատարագան... տանել յեկեղեցի» զի օրհնեցի» (Ա). հոն կ'օրհնուի միայն, բայց չի զենուիր, ինչպէս մատաղի միւս տեսակները կը լինէին: Յետոյ քահանայք տուն կ'երթային՝ օրհնելու համար սեղանն ալ, ուր պիտի ուտուէր մատաղը, ինչպէս տեսանք նոյն կանոններէն մեկին մէջ (աստ, 319): Այս կրկին աղօթից հնագոյն ձեւերն եթէ տարբեր էին ծանօթներէն, անստոյգ կը մնան: Բայց միջին դարուն աւսոնց առաջինը կը կազմեն ըստ Շնորհաււոյն՝ «քահանայական աղօթքն եւ մարգարէից եւ առաքելոց եւ աւետարանչացն բանքն՝ զորս ընթեռնուն ի վերայ աղիւն, եւ խաչիւն զրոշմեն» (Ընդհ. 157), կերցընելու համար անասնոյն: Այս կանոնն հաւանօրէն նոյն է տեառնական մատաղին վրայ կատարուածին հետ, զոր պիտի տեսնենք յետոյ. զի հին Մաշտոցն այս տեսակին յատուկ օրհնութիւն չունի: Դարձեալ՝ Շնորհաււոյն բացատրութեան եւ գուցէ դիտաւորութեան մէջ եւս կայ՝ ամբողջ օրհնութիւնն «ի վերայ աղիւն» միայն կատարել տալ՝ եւ ոչ անասնոյն ալ, ինչպէս կը սահմանէ մաշտոցը տեառնականին եւ հոգեհանգստեան կանոնաց մէջ: